Հայոց անհետ պարիք · ապա հրամայեաց չինել զայն · Հայք նոյնհետայն կանգնեցին զիւղաբերից սեղանն , կախեցին պատկերս և կանթեղս 'ի սիւնս և յայլ պատշաճաւոր սեփհական տեղիս · զարմացեալ էին ամենեքեան ընդ փոփոխումն Դատաւորին , զի յառաջագոյն սպառնալեօք գոչէր չթողուլ կախել զկուռս եւ պաշտել , զի ընդդէմ ասէր օրինաց · իսկ այսօր նոտեալ 'ի ներքոյ պատկերաց հրամայէ կանգնել խորան , եւ ձայնէր՝ եթէ ունիք զայլ պատկերս՝ ածէք և դիք 'ի տեղիս իւրեանց ։ Ցանձն արար Հայոց զբանալիս Ցովսէփայ Արեմաթացւոյն , և բացեալ գտին զայն միայն փոքր սենեակ ինչ եւ այն եւս մթին , և զայլ տեղիս առեալ 'ի կողմն իւրեանց · և 'ի լինիլ վիճմանց եւ խռովութեանց , ծերունի փոխանորդն Ցունաց կամեցաւ տեսանել զայն տեղի , այլ միաբանք նոցին ասէին գնալ առանձին՝ եւ մի առնուլ ընդ իւր զոք յօտարաց , զի մի յայտնեսցեն զգործն · զի 'ի չորից մասանց զմի մասն միայն թողեալ էին · յետ տեսանելոյն նորա զայն ընդ Տեսչի իւրեանց , հարցանէ ցՀայս · զի՞նչ ասէք վասն տեղւոյն այնորիկ · և նոքա ասեն , բարձէք 'ի միջոյ զանջրպետ որմն , եւ ըստ առաջին չափոյն յանձնեցէք մեզ · նոքա ասեն , չափն չէ յայտ , զի ոչ է չինեալ ըստ առաջին ձեւոյն ։ Առ այս պատասխանի ետուն Հայք , 'ի բերանոյ ձերմէ դատեսցուք զձեզ · զի 'ի Կոստանդինուպոլիս աղաղակ բառնայիք , թէ ըստ առաջին ձեւոյն չինեցաք , այժմ յայտ յանդիման խոստովանիք զանգթութիւնս ձեր · գնացեալ տեսին նաեւ գործակալքն և մեղադրէին զանողորմ գործս Ցունաց ։ Դատաւորն աղաչէր զՀայս սիրով կատարել զգործն , և նոքա ասեն թէ մեք արք եղբարք եմք և չիք խտրութիւն 'ի միջի մերում , այլ ոչ է պարտ թողուլ զգթութիւն 'ի ձեռաց ։ Ցոյնք խոստացան տալ զերկուս կամարս միայն , եւ զմին չկամէին տալ և աղաչէին զանց առնել զնովաւ · զի դուռ սենեկի նոցին առաջի նորա է , սակայն Հայք ոչ հաճեցան · եւ վերջացաւ այն օր վէճն և փակեցաւ դուռն ։

Եւ 'ի վաղիւն կարգեցան արք 'ի կողմանէ Դատաւորին և Քաղաքապետին , ընդ որս էին և այլազգի դռնապանք · կային նաեւ ոմանք 'ի Հայոց և 'ի Ցունաց · Հայոց՝ հոգալ